# Մեկնարկում երկիչխանություն է հաստատվել



Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի կենտրոնական տանն իրենց մրցավեճն են սկսել շախմատի տղամարդկանց բարձրագույն խմբի 65-րդ առաջնության 12 մասնակիցները: Նրանց թվում են 8 գրոսմայստերներ, միջազգային 2 վարպետներ: Ուժեղագույն գրոսմայստերներից բացակայում են Վլադիմիր Հակոբյանը, Լեւոն Արոնյանն ու Սմբատ Լպուտյանը: Մասնակիցների միջին վարկանիշը 2521 է, որը համապատասխանում է ՖԻԴԵ-ի 11-րդ կարգին: Սահմանված են գրոսմայստերի (7 միավոր) եւ միջազգային վարպետի (4,5) նորմաներ, ինչպես նաեւ դրամական պարգեւներ: Հայաստանի չեմպիոնը կպարգեւատրվի 1,5 մլն դրամով: 2-րդ տեղը գրաված շախմատիստը կստանա 900 հազար դրամ: 3-5-րդ տեղերի համար համապատասխանաբար կհանձնվի 500, 300 եւ 200 հազարական դրամ: 6-12-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստներին վաստակած յուրաքանչյուր միավորի համար կտրվի 10 հազարական դրամ: Մրցաշարում 1-5-րդ տեղերը զբաղեցրած շախմատիստներն իրավունք կստանան մասնակցելու Եվրոպայի անհատական առաջնությանը եւ հաջորդ տարվա ՀՀ բարձրագույն խմբի մրցաշարին: Երկրի չեմպիոնը կհամալրի Հայաստանի հավաքականը, որը մասնակցելու է աշխարհի եւ Եվրոպայի թիմային առաջնություններին:

Եթե առաջին տեղը հավասար միավորներով բաժանեն 2 շախմատիստներ, ապա մրցաշարի ավարտից մեկ շաբաթ անց նրանց միջեւ կանցկացվի լրացուցիչ 2 պարտիա: Եթե հաղթողը չորոշվի, ապա կանցկացվի 2 պարտիա արագ շախմատի կանոններով, իսկ հարկ եղած դեպքում՝ նաեւ կայծակնային մրցախաղ: Իսկ եթե չեմպիոնի կոչմանը հավակնեն երկուսից ավելի շախմատիստներ, ապա մրցաշարի ավարտից 10 օր անց նրանց մասնակցությամբ 2 շրջանից բաղկացած մրցամարտ կանցկացվի:

Առաջնությունում արդեն կայացել է 4 տուր: Առայժմ բոլորից հաջող են հանդես գալիս Աշոտ Անաստասյանն ու Կարեն Ասրյանը, որոնք վաստակել են 3-ական միավոր: Անաստասյանը հաղթել է Սարգսյանին եւ Քոթանջյանին, ոչ-ոքի ավարտել պարտիաները Արթուր Չիբուխչյանի եւ Արտաշես Մինասյանի հետ: Ասրյանը պարտության է մատնել Բենիամին Գալստյանին եւ Արտաշես Մինասյանին, խաղաղ դաշն կնքել Արթուր Չիբուխչյանի եւ Տիգրան Քոթանջյանի հետ:

Հանրապետության ներկայիս չեմպիոն Արտաշես Մինասյանը Գաբրիել Սարգսյանի եւ Արմեն Եղիազարյանի հետ 2,5 միավորով բաժանում է 3-5-րդ տեղերը:

# «Անկախություն» գավաթի ռեկորդակիրները

***Մայիսի 9-ին «Հանրապետական» մարզադաշտում կկայանա ՀՀ գավաթի եզրափակիչ հանդիպումը, որում պատվավոր մրցանակը կվիճարկեն Աշտարակի «Միկան» ու Երեւանի «Կիլիկիան»: Ընթերցողներին ենք ներկայացնում հետաքրքրաշարժ թվեր եւ փաստեր ՀՀ գավաթի խաղարկություններից:***



• Առավել հաճախ՝ 4 անգամ գավաթակիր է դարձել Երեւանի «Արարատը», ընդ որում՝ երեք տարի անընդմեջ (1993-1995 թթ.):

• Առավել հաճախ՝ 5-ական անգամ գավաթի եզրափակիչում հանդես են եկել «Արարատն» ու «Փյունիկը»:

• Գավաթի մրցաշարերի ամենահաջողակ թիմը «Միկան» է: Գավաթը նվաճելու թիմի բոլոր 3 փորձերն էլ հաջողությամբ են պսակվել: Իսկ ահա «Շիրակն» ամենաանհաջողակն է: Գյումրեցիները 3 անգամ հանդես են եկել եզրափակիչում եւ բոլոր դեպքերում էլ խաղադաշտը թողել են պարտված: Վերջին երկու տարիներին «Բանանցի» բախտը չի բերում: Գավաթի համար վճռորոշ խաղերում թիմը զիջել է «Միկային» եւ «Փյունիկին»:

• Միայն «Ցեմենտին» (1999 թ.) եւ «Փյունիկին» (2002 թ.) է հաջողվել նվաճել գավաթը՝ հաղթելով անցկացրած բոլոր 7 հանդիպումներում:

• Գավաթակիրներից միայն «Միկային» (2003 թ.) եւ «Փյունիկին» (2004 թ.) է հաջողվել անցկացրած բոլոր 7 հանդիպումներում էլ դարպասը պահել անառիկ:

• Յուրօրինակ ռեկորդակիր է «Արարատը»: 1993-96 թթ. գավաթի խաղարկություններում արարատցիները 21 խաղ շարունակ չեն պարտվել:

• Ամենախոշոր հաշիվը գրանցվել է 1992 թ. 1/16 եզրափակիչի «Հաճըն»-«Արարատ» (1-12) եւ 1997 թ. 1/8 եզրափակիչի «Շիրակ»-«Դինամո» (12-1) հանդիպումներում: 1997 թ. երկու խաղերին «Շիրակը» «Դինամոյին» հաղթել էր ընդհանուր 21-1 հաշվով, ինչը եւս ռեկորդ է:

• Գավաթի մեկ խաղարկությունում բոլորից արդյունավետ է գործել «Փյունիկը»: 1996 թ. անցկացրած 9 խաղում փյունիկցիները խփել են 43 գնդակ (միջինը՝ 4,7 գոլ): Այդ տարի «Փյունիկը» հատկապես աչքի ընկավ 1/16 եզրափակիչում՝ «Արմավիրի» հետ 2 խաղում խփելով 20 գնդակ (11-1, 9-1):

• Մեկ խաղարկությունում խփած գոլերով ռեկորդակիրներն են Արման Քարամյանը («Փյունիկ», 2002 թ.) եւ Արամ Ոսկանյանը («Միկա», 2003 թ.), որոնք դարձել են 9-ական գոլի հեղինակ:

• Մեկ խաղի արդյունավետության ռեկորդը պատկանում է «Միկայի» հարձակվող Արամ Ոսկանյանին, որը 2003 թ. «Դինամոյի» հետ 1/8 եզրափակիչի առաջին խաղում խփել է 6 գոլ:

• Գավաթի խաղարկությունների լավագույն ռմբարկուն Գեղամ Հովհաննիսյանն է՝ 32 գնդակ: Ներկայումս Հայաստանում հանդես եկող ֆուտբոլիստներից լավագույն արդյունքն Արամ Հակոբյանինն էր (22 գնդակ):

• Լեգեոներներից առավել արդյունավետ է գործել փյունիկցի Մամադու Դիավարան՝ խփելով 12 գնդակ:

• Գավաթի եզրափակիչ հանդիպումներում բոլորից արդյունավետ են գործել Համլետ Մխիթարյանն ու Կարեն Բարսեղյանը՝ 3-ական գնդակ:

• Միայն 3 ֆուտբոլիստի է հաջողվել եզրափակիչում 2 գոլ խփել: Աչքի են ընկել Արմեն Շահգելդյանը («Արարատ», 1993 թ.՝ «Շիրակին»), Կարեն Բարսեղյանը («Կոտայք», 1995 թ.՝ «Արարատին», երկուսն էլ՝ 11 մ հարվածով) եւ Հայկ Հակոբյանը («Ցեմենտ», 1999 թ.՝ «Շիրակին»):

• Գավաթի խաղարկություններում անցկացրած խաղերի քանակով ռեկորդակիրը Հովհաննես Թահմազյանն է՝ 67 խաղ:

• Մարզիչներից առավել հաճախ՝ 3 անգամ գավաթակիր թիմ է պատրաստել Վարուժան Սուքիասյանը, որի գլխավորությամբ մրցանակը նվաճել են «Բանանցը» (1992 թ.) եւ «Ցեմենտը» (1998, 1999 թթ.): Իսկ ահա «Շիրակի» գլխավոր մարզիչ Անդրանիկ Ադամյանին կարելի է կարեկցել: Նրա սաների համար բոլոր 3 եզրափակիչներն էլ ավարտվել են պարտությամբ:

• Ֆուտբոլիստներից ամենատիտղոսակիրը Տիգրան Գասպարյանն է, որը հնգակի գավաթակիր է (4 անգամ՝ «Արարատում», մեկ անգամ՝ «Ցեմենտում»):

• Արամայիս Տոնոյանը որպես թիմի ավագ 4 անգամ ֆեդերացիայի ներկայացուցչից ստացել է պատվավոր մրցանակը: Նա 6 տարի անընդմեջ (1993-98 թթ.) «Արարատի», «Փյունիկի» եւ «Երեւանի» կազմերում հանդես է եկել եզրափակիչ հանդիպումներում: Առաջին 4 եզրափակիչները նրա համար հաղթական են եղել: Տոնոյանը մասնակցել է եւս 2 եզրափակիչի (2000-01 թթ.), սակայն որպես «Միկայի» մարզիչ: Երկու եզրափակիչներն էլ նրա սաների համար հաղթական են եղել: Եզրափակիչ 6 խաղի է մասնակցել նաեւ Համլետ Մխիթարյանը:

• Փյունիկցիներ Ժորա Հովհաննիսյանն ու Էդգար Մանուչարյանը գավաթակիր են դարձել 15 տարեկանում (2002 թ.): Իսկ ահա Սամվել Նիկոլյանը գավաթը նվաճած ամենատարիքով ֆուտբոլիստն է: 2001 թ. նա «Միկայում» գավաթակիր է դարձել 37 տարեկանում:



## Երկու մրցանակակիր

15 երկրների ավելի քան 100 բռնցքամարտիկներ մասնակցեցին Դոնեցկում անցկացված «Դոնբասի գավաթ» միջազգային երիտասարդական մրցաշարին: Հայաստանից ոինգ դուրս եկած վեց բռնցքամարտիկներից երկուսը դարձան մրցանակակիր: Գերազանց հանդես եկավ մինչեւ 48 կգ քաշային Հովհաննես Դանիելյանը: Երեւանցի բռնցքամարտիկը հաղթելով իր բոլոր մրցակիցներին, արժանացավ ոսկե մեդալի: Մինչեւ 85 կգ քաշային կարգում էջմիածնեցի Մյասնիկ Սարգսյանը նվաճեց բրոնզե մեդալ: Դոնեցկում մեր բռնցքամարտիկների մենամարտերը ղեկավարում էին ՀՀ երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչ Դերենիկ Ոսկանյանն ու նրա օգնական Արմեն Հակոբյանը:

## Հայ բանակային մարզիկների հարուստ ավարը

Սանկտ Պետերբուրգում անցկացված ԱՊՀ զինված ուժերի 5-րդ համաբանակային սպարտակիադայում հաջող մրցելույթներ ունեցան հայ բանակային մարզիկները: Վեց մարզաձեւից (ծանրամարտ, կշռաքարերի բարձրացում, ազատ ոճի ըմբշամարտ, ռազմական քառամարտ, հրաձգություն, բազմամարտ) Հայաստանից մրցասպարեզ դուրս եկան 39 մարզիկներ: Մրցումներին մասնակցում էին նաեւ Ռուսաստանի, Ուկրաինայի, Ղազախստանի, Տաջիկստանի մարզիկները:

Հայ բանակային մարզիկներն առավել հաջող հանդես եկան ծանրամարտի մրցումներում: Մինչեւ 85 կգ քաշային կարգում չեմպիոնի կոչմանն արժանացավ Գեւորգ Ալեքսանյանը, որը երկամարտում ցույց տվեց 347,5 կգ արդյունք: Եվս երկու մարզիկներ դարձան մրցանակակիրներ՝ արժանանալով բրոնզե պարգեւների: Հաջող ելույթներ ունեցան Արտյոմ Մկրտչյանը (մինչեւ 62 կգ, 257,5 կգ) եւ Գեւորգ Դավթյանը (մինչեւ 69 կգ, 280 կգ): Թիմային հաշվարկով մեր ծանրորդները գրավեցին 3-րդ տեղը: Հայ մարզիկները վատ հանդես չեկան նաեւ մյուս մարզաձեւերում՝ նվաճելով 6-ական արծաթե եւ բրոնզե մեդալներ:

## Պատանիները նոր հավաք են սկսել

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը (գլխավոր մարզիչ՝ Սամվել Պետրոսյան) մայիսի 2-9-ը ուսումնամարզական իր երկրորդ հավաքն է անցկացնում՝ նախապատրաստվելով Հունգարիայում կայանալիք Եվրոպայի առաջնության ընտրական մրցախաղերին: Եթե նախորդ հավաքում մարզիչները մտադրվել էին փորձարկելու նոր ֆուտբոլիստների, ապա այս անգամ շեշտը դրվելու է հավաքականի հիմնական կազմի խաղացողների վրա: Մասնավորապես, հավաքին մասնակցում է Ժորա Հովհաննիսյանը, որը վերջերս 3 տարվա պայմանագիր է կնքել հունական «Օլիմպիակոսի» հետ: Բացի նրանից, հավաքին մասնակցում են «Փյունիկի» ֆուտբոլիստներ Արթուր Եսայան, Կառլ Լոմբեն, Հայկ Չիլինգարյանը, Արտակ Անդրիկյանը, Ալեքսանդր Պետրոսյանը, Արտակ Հովհաննիսյանը, Ռաֆայել Սաֆարյանը, Խորեն Վերանյանը, Մխիթար Գրիգորյանը, Գեւորգ Նռանյանը, Վահե Մեհրաբյանը, Մարտին Մկրտումյանը, Արմեն Հովհաննիսյանը: Մարզվում են նաեւ լեգեոներներ Էդգար Մանուչարյանը («Այաքս»), Արթուր Ստեփանյանը («Սոկոլ»), Գուրգեն Մելիքսեթյանը («Լոկոմոտիվ»), ինչպես նաեւ կոտայքցի Միխել Սիմոնյանը եւ «Բանանցի» ֆուտբոլիստներ Արտակ Օսեյանն ու Աղվան Հայրապետյանը:

## Իտալացիներն ավելի մեծ գումար են առաջարկում

Իտալիայի շախմատի ֆեդերացիան աշխարհի բացարձակ չեմպիոնի կոչման համար ուժեղագույն գրոսմայստերների մասնակցությամբ մրցաշարը Ալգերո քաղաքում անցկացնելու պաշտոնական հայտ է ներկայացրել ՖԻԴԵ: Իտալացիները որպես մրցանակային հիմնադրամ առաջարկել են 1,5 մլն դոլար: Դա 500 հազար դոլարով ավելին է արգենտինական Սան Լուիս քաղաքի առաջարկած մրցանակային գումարից: Իտալացիներն առաջարկել են մրցաշարն անցկացնել սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 15-ը: Թեեւ Իտալիայի շախմատի ֆեդերացիան հայտը ներկայացրել է ժամանակին, սակայն այդպես էլ ՖԻԴԵ-ից պատասխան չի ստացել: Պատճառը հավանաբար այն է, որ դեռեւս ապրիլի 27-ին ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովն ու Սան Լուիսի նահանգապետ Ալբերտո Ռոդրիգես Սաան մրցաշարի անցկացման համաձայնագիր էին ստորագրել:

Ի դեպ, արդեն մրցաշարից հրաժարվելու մասին հայտարարել է դասական շախմատի վարկածով աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կրամնիկը, թեեւ ՖԻԴԵ-ն դեռեւս նրանից պաշտոնական գրություն չի ստացել: Գարի Կասպարովն էլ, ինչպես հայտնի է, վերջերս հայտարարել էր շախմատին հրաժեշտ տալու իր որոշման մասին: Այնպես որ, դեռեւս հայտնի չէ մրցաշարի մասնակիցների վերջնական կազմը:

## Ռոմարիոն հրաժեշտը նշեց գոլով



Բրազիլացի լեգենդար ֆուտբոլիստ Ռոմարիոն վերջին անգամ հագավ երկրի ազգային հավաքականի մարզաշապիկը: Գվատեմալայի հավաքականի հետ ընկերական մրցախաղը Ռոմարիոյի հրաժեշտի խաղն էր: 39-ամյա Ռոմարիոն չորսամյա ընդմիջումից հետո վերջին անգամ հավաքականի կազմում խաղադաշտ դուրս եկավ: Իր հրաժեշտը նա նշանավորեց գոլով: Երբ 17-րդ րոպեին նա գրավեց մրցակցի դարպասը, շատ բուռն արտահայտեց գոլի ուրախությունը՝ հանելով մարզաշապիկը, ինչի համար մրցավարի կողմից պատժվեց դեղին քարտով: Իսկ 38-րդ րոպեին Ռոմարիոն փոխարինվեց: Նրան փոխարինած Գրաֆիտեն դարձավ 3-րդ գոլի հեղինակը: Իսկ հաշիվը 5-րդ րոպեին բացեց Անդերսոնը: Բրազիլիայի հավաքականը հաղթեց 3-0 հաշվով, իսկ Ռոմարիոն փոխարինվելով, ֆուտբոլասերների բուռն ծափահարությունների ու բացականչությունների ներքո պատվո շրջան կատարեց մարզադաշտում:

## Ուիմբլդոնում պարգեւավճարները կաճեն

Ամռանը Լոնդոնում կայանալիք Ուիմբլդոնյան մրցաշարի ընդհանուր մրցանակային հիմնադրամը կգերազանցի 10 մլն ֆունտ ստեռլինգը (19,15 մլն դոլար): Կանանց մրցաշարի մրցանակային հիմնադրամը նախկինի պես զիջում է տղամարդկանց պարգեւավճարներին, թեեւ տարեցտարի այդ տարբերությունը նվազում է: Նշենք, որ Ուիմբլդոնյան մրցաշարի կազմակերպիչները մրցումների նկատմամբ հետաքրքրությունն ավելի մեծացնելու նպատակով տարեցտարի ավելացնում են պարգեւավճարների չափը:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

